ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
# ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
28.06.2023Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 24 անդամները, բացակայում են Գարիկ Պալյանը,Սահակ Բաղդասարյանը և Մելիք Գասպարյանը: Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

***Համայնքի ղեկավարի տեղակալներ Ս.Վարդանյանը, Գ.Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Վ.Չիլինգարյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը, Բ. Բալբաբյանը , Ս.Բալաբեկյանը և գյուղերի վարչական ղեկավարները:***

***Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար_Հ. Շահգալդյանը:***

Նախքան նիստի սկսվելը համայնքապետրանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը ներկայացրեց Չարենցավան համայնքի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցրած Աննա Բալյանի փոխարեն ավագանու անդամի մանդատ ստացած Նորիկ Մալխասյանին :

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի թիվ 6 հերթական նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2) Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:
4) Սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝*

**Կողմ- 15** **դեմ -0** **ձեռնպահ -9**

*Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:*

*Լսեցին.*

***1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:***

***/Զեկ. Գ.Աֆյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով՝ ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի «Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 79-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելված N 1-6.

**/հազ. դրամ/**

| Տողի N | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը | Բյուջեի ավելացում | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Վարչ. մաս | Ֆոնդ. մաս | |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* |
| 1. | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 7422 | 70500.0 | 7000.0 | 0 | 77500.0 |
| 2. | Հողի օտարումից մուտքեր | 8411 | 142796.913 | 0 | 6997.36 | 149794.273 |

**/հազ. դրամ/**

| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագրի անվանումը | Հոդվածի NN | Ընդամենը | Բյուջեի ավելացում | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վարչ. մաս | Ֆոնդ. մաս | |
| 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 4241 | 6471.8 | 1000.0 | 0 | 7471.8 |
| 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | 5129 | 0 | 0 | 900,0 | 900,0 |
| 06 | 1 | 1 | Բնակարանային շինարարություն | 4521 | 0 | 6000,0 | 0 | 6000,0 |
| 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 5113 | 30976.0 | 0 | 6097.36 | 37073.36 |

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:**

Ավագանու անդամ Ա.Գալստյանը առաջարկեց բյուջեում կատարվող փոփոխությունները քննարկել բաժին առ բաժին: Հարցեր հնչեցին տեսախցիկների տեղադրման, սպասարկման, հարթ տանիքների վերանորոգման և այլ աշխատանքների վերաբերյալ, որոնց համայնքի ղեկավար Հ.Շահգալդյանը տվեց համապատասխան պարզաբանումներ:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 24 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:***

***/Զեկ. Գ.Աֆյան/***

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 6-րդ թաղ. 13-րդ շենքի 19 բն. բնակիչ Նունե Վալերիկի Հովսեփյանի 2023թվականի հունիսի 20-ի թիվ 2645-16, Չարենցավան համայնքի Բջնի գյուղի 6-րդ փողոց 10-րդ տան բնակիչ Անահիտ Ռաֆիկի Գրիգորյանի 2023 թվականի հունիսի 20-ի թիվ 2644-16, Չարենցավան համայնքի Ֆանտան գյուղի բնակիչ Վարուժան Պատվականի Խաչատրյանի 2023թվականի հունիսի 20-ի թիվ 2646-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Նունե Հովսեփյանին***,
2. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Անահիտ Գրիգորյանին,***

3. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Վարուժան Խաչատրյանին:***
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-24** **դեմ-0** **ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:***

***/Ս.Վարդանյան /***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, 77-րդ հոդվածով, ***առաջարկում եմ.***

1. Տալ համաձայնություն Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները 2 (երկու) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով, տրամադրելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացիների դիմումների:

*հավելված*

| Հ/Հ | Ազգանուն անուն | հասցե |
|---|---|---|
| 1. | Օսիպյան Սամվել | ք.Չարենցավան, 10-րդ թաղամաս, 2-րդ փողոց, 15 տուն |
| 2. | Սառիկյան Աստղիկ<br>Սառիկյան Սամվել | ք.Չարենցավան, 6-րդ թաղամաս, 29-րդ շենք, 27 բնակարան |
| 3. | Գասպարյան Սիրանուշ | ք.Չարենցավան, 3-րդ թաղամաս 1-ին շենք, 11 բնակարան |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը ներկայացրեց որոշման նախագիծը, նշեց որ համապատասխան փաստաթղթերի և իրավական հիմքերի բացակայության պատճառով Աստղիկ և Սամվել Սառիկյաններին անհատույց հատկացվող բնակարանի տրամադրումը կհետաձգվի:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝***

Քվեարկության եմ դնում որոշումը՝ առանց որոշման հավելվածի 2-րդ կետի:

**Կողմ- 24** **դեմ-0** **ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***4. Սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:***

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով Հարություն Ավենյանի, Անի Ավենյանի և Մարինե Ծովանյանի կողմից ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հայտերը. ***առաջարկում եմ.***

1. ***Հարություն Ավենյանին*** սեփականության իրավունքով պատկանող 07-019-0420-0011 ծածկագրով 0.1798 հա մակերեսով գյուղատնտեսական վարելահող հողատեսքից 1100քմ մակերեսով հողատեսքի նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի:
2. ***Անի Ավենյանին*** սեփականության իրավունքով պատկանող 07-019-0420-0010 ծածկագրով 0.237 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքից 1100 քմ մակերեսով հողատեսքի նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի:
3. ***Մարինե Ծովանյանին*** սեփականության իրավունքով պատկանող 07-008-0253-0028 ծածկագրով 0.2 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքից 1100 քմ մակերեսով հողատեսքի նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

*Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝*
Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 24** **դեմ-0** **ձեռնպահ-0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:*

*Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝*

**Առաքելյան Նորայր**
**Բաբայան Արայիկ**
**Գևորգյան Գևորգ**
**Դավթյան Կարեն**
**Եփրեմյան Բաբկեն**
**Եփրեմյան Տարոն**
**Խլղաթյան Արսեն**
**Մակինյան Վարդան**
**Շահգալդյան Հակոբ**
**Վարդանյան Նորայր**
**Վարդանյան Սարգիս**
**Վարդանյան Սևակ**
**Պողոսյան Մնացական**
**Խեչոյան Անահիտ**
**Պապոյան Դավիթ**
**Բաբայան Նարեկ**
**Գալստյան Արթուր**
**Թադևոսյան Նունե**
**Խաչատրյան Արշակ**
**Հարոյան Լիլիթ**
**Սահակյան Գառնիկ**
**Մալխասյան Նորիկ**
**Վարդանյան Նորիկ**
**Ղամբարյան Գարիկ**

*Նիստն արձանագրեց Ս.Մուրադյանը*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**